Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-06-2024 թ. որոշմամբ
ՀՀ ԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՏԵՐՅԱՆ 105
1.3 Պետական գրանցման համարը		222.160.840381
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-09-18
1.5 ՀՎՀՀ-ն		01504054
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10566050
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.polytech.am
1.8 Էլեկտրոնային փոստը		k.khachatryan@polytechnic.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Յուրի Սարգսյան		
Վազգեն Մելիքյան		
Կառլեն Բեգոյան		
Աշոտ Խաչատրյան		
Սեյրան Ավետիսյան		
Արամ Գևորգյան		
Ալինա Զզմեյյան		
Ռաֆայել Թովմասյան		
Նարեկ Համբարձումյան		
Էրիկ Մովսեսյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Գոռ Վարդանյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1745	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		

	Բարձրագույն, հետբուհական , միջին մասն, հանրակրթականկրթություն նպաստ	1,960,615,600
	Բարձրագույն, հետբուհական , միջին մասն, հանրակրթական կրթություն կրթաթոշակ	128,686,000
	Գիտական հետազոտություններ	360,041,700
	Ավագ դպրոցի ուսուցիչներիՍոցիալական փաթեթ	3,745,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Գիտահետազոտական պայմանագրեր	41,541,000
	Սպասարկման ծառայություններ	25,373,100
	Տպագրահրատարակչական ծառայություններ	2,747,460
	Կրթական ծառայություն/Սինոփսիս/	158,255,404
	ՀՀ առևտրային բանկերում ցպահանջ ավանդներից տոկոսներ	59,941,996
	Դրամաշնորհներ	69,491,000
	Ձեռնարկատիրական գործունեությունից	21,847,176
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Վճարովի ուսուցումից	1,730,119,250
	Տպագրահրատարակչական ծառայություններ	694,800
	Ձեռնարկատիրական գործունեությունից	171,675,774
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	2,453,088,900	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Համակարգիչ և համակարգչային տեխնիկա	14,168,337
	Ինտերակտիվ գրատախտակ	945,455
	Էլեկտրական սարքեր	2,057,510
	Նյութեր	39,586,750
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Բարձրագույն,Հետբուհական, Միջին մասնագիտական,Հանրակրթական կրթություն	3,345,733,697	
Ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագիր	155,364,590	

Գիտական աստիճանի հավելավճարներ	27,479,170
Երկակի նշանակության գիտական թեմաներ	67,634,020
Տերպենների հիման վրա նոր կեսաակտիվ միացությունների ստացման անթափոն տեխնոլոգիայի մշակում:	1,567,000
Բարձր էներաարդյունավետությամբ բջջային հետախոսակապի բազային կայանների մշակումը:	2,760,000
Տվյալների մշակման ընդլայնվող հարթակ երկրի դիտարկումների տվյալների շտեմարանների համար:	3,008,140
Հանքաքարի արդյունահանման տեխնոլոգիայով պայմանավորված հանքամարմնի եզրագծման օպտիմալացումը	600,000
Բարձր արդյունավետությամբ արևային էլեմենտների համար բարդ օքսիդային թաղանթներ- սև սիլիցիում տանդեմների մշակում և հատկությունների հետազոտում:	2,526,240
Ուղղահայաց անցումով արևային էլեմենտների հիման վրա ֆոտովոլտային փոխակերպիչների մշակում:	8,975,510
Ուլտրաձայնային տատանումների մգնիսաառանձգական կերպափոխիչների կիրառմամբ կոյուղու խողովակաշարերի մաքրման գործընթացի արդյունավետության և արտադրողականության բարձրացումը:	7,200,000
Տարբեր մեկուսիչ հարթակների վրա մակերևույթային տրորմամբ ստացված երկչափ կիսահաղորդիչներ հաջորդ սերնդի էլեկտրոնիկայի համար:	26,280,000
ԱԹՍ-րի դժվարամշակ նյութերից ցածր կոշտության մեքենամասերի մշակման արդյունավետության բարձրացումը բազմաստիճան սայրով նյութերի կտրման գործընթացների կատարելագործմամբ և կիրառմամբ:	7,891,410
Արհեստական նեյրոնային ցանցի հենքով էլեկտրաբանեցման կառավարման համակարգի մոդելի մշակումը:	6,889,800
Սիլիցիումային ֆոտոդեդեկտորի հիման վրա վնասկար նյութերի հեռամշտադիտարկման համակարգի մշակում:	5,938,830
Մետաղա-դիէլեկտրիկ [illegible] մանրաթելաօպտիկական կապի գծերի համար նախագծում թվային էլեկտրամագնիսական մոդելավորման միջոցով:	6,459,400
Արհեստական բանականությամբ ինտեգրալ սխեմաների և դրանց նախագծման միջոցների մշակումը:	4,922,320

Digitally signed by KHACHATRYAN KARINE
6914750106
Date: 2024.08.12 16:18:58 AMT

Նանոկոմպոզիտների և նանոկոմպոզիտային թաղանթների սինթեզի նոր տեխնոլոգիայի մշակում:	5,406,250
ՀՀ բնահողային գոտիների տեխնածին աղտոտման բաղմաբաղադրիչ ազդեցության երկրաբնապահպանական ռիսկերի գնահատում և դրանց կանխարգելման համալիր միջոցառումների մշակում:	8,182,380
Մագնիսառեոլոգիական հեղուկով էլեկտրամագնիսական համակարգի մոդելավորում և նախագծման ավտոմատացում:	6,100,000
Մթնոլորտային սահմանային շերտի ակուստիկական խորազննման համար դիտոնացիոն սոդարի մշակումը:	6,589,740
Պերովսկիտ-սիլիցիում երկանցումային արևային տարրերի մշակում	30,486,490
Փայտոն ծրագրավորման շարութնական կրթությանուսուցման ծրագիր	7,036,007
Վեբ ծրագրավորման շարութնական կրթությանուսուցման ուսուցման ծրագիր	1,688,645
Համակարգչային ցանցային տեխնոլոգիաներ շարունակական կրթության ծրագիր	1,970,080
Արհեստական բանականության շարութնական կրթության ծրագիր	1,407,200
Մանկավարժի հավաստագրման շարունակական կրթության դասընթացներ	1,266,481
Դատա Սիենս շարունակական կրթական ծրագիր	703,600
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	4,752,977,000
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	3,752,067,000

Նշումներ՝

Հոգաբարձուների անդամներ են նաև Տիգրան Ավինյանը, Սուրեն Վարոսյանը, Զարուհի Մաթևոսյանը, Սարգիս Հայոցյանը, Վահե Կուզոյանը, Այեքսանդր Եսայանը, Արամ Սալաթյանը, Արթուր Մարտիրոսյանը, Դավիթ Հովհաննիսյանը:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 35 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ հոգաբարձուների խորհրդին

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»** ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (Հիմնադրամի) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխություններ մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԵ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմանդրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն , որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք պմասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

- Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 25.06.2024թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն Գոռ Դավթյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ»
"PKF AUDIT SERVICE"
00419022

Որակավորված աուդիտոր՝ Հայկ Պողոսյան

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԷՋ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	2
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	3
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	4
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	5
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՎՀՀ 01504054,ՀՀ, ք. Երևան, Տերյան 105
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հասույթ	4	4,623,234	4,179,223
Ինքնարժեք	5	(3,185,585)	(3,083,164)
Համախառն շահույթ		**1,437,649**	**1,096,059**
Եկամուտ շնորհներից		210,678	263,143
Շնորհների գծով ծախսեր	9	(210,678)	(263,143)
Այլ եկամուտ		33,231	35,412
Իրացման ծախսեր	6	(329,967)	(329,197)
Վարչական ծախսեր	7	(1,000,910)	(767,067)
Այլ ծախսեր	8	(68,819)	(92,729)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)			
Այլ ոչ գործառնական գործունեությունից եկամուտ/ծախս		68,649	37,438
Ստացված տոկոսներ		**71,184**	**(57,522)**
Ֆինանսական ծախսեր		-	-
Ոչ գործառնական եկամուտ		-	-
Ոչ գործառնական ծախս		-	-
Արտարժույթի արժեքի փոփոխությունից տարբերություն		8,707	(40,340)
Զուտ շահույթ մինչև շահութահարկը		**139,833**	**(20,084)**
Շահութահարկի գծով ծախս(փոխհատուցում)	10	(40,471)	(28,167)
Տարվա շահույթ(վնաս)		**99,362**	**(48,251)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		**99,362**	**(48,251)**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 2-31) հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 25-ին:

Ռեկտոր՝ Գ.Պ. Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝ Կ.Մ. Խաչատրյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՎՀՀ 01504054,ՀՀ, ք. Երևան, Տերյան 105
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	1,607,699	1,602,633
Հողամասեր		25,045	25,045
Ոչ նյութական ակտիվներ	12	3,541	5,294
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		-	-
Հետաձգված հարկային ակտիվներ		30,797	31,989
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,667,082**	**1,664,961**
Ընթացիկ ակտիվներ			-
Պաշարներ	13	212,057	189,434
Դեբիտորական պարտքեր բյուջեին	14	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	63,658	42,695
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	15	1,068,755	1,086,956
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**1,344,470**	**1,319,085**
Ընդամենը ակտիվներ		**3,011,552**	**2,984,046**
Կապիտալ և պահուստներ			
Վերագնահատման պահուստ		7,096	7,096
Այլ պահուստներ		156,482	156,482
Կուտակված շահույթ		1,201,040	1,101,678
Ընդամենը սեփական կապիտալ		**1,364,618**	**1,265,256**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերվող շնորհներ	18	1,060,872	1,116,969
Երկարաժամկետ փոխառություններ	17	-	12,166
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ		73,105	52,056
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**1,133,977**	**1,181,191**
Ընթացիկ պարտավորություններ			
Հարկային պարտավորություններ	16	16,824	47,079
Երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մաս	17	12,166	18,249
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	50,953	39,531
Եկամուտներին վերաբերվող շնորհներ	19	37,455	22,441
Ստացված կանխավճարներ		215,219	233,940
Պահուստներ		180,340	176,359
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**512,957**	**537,599**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**3,011,552**	**2,984,046**

Ռեկտոր՝ Գ.Պ. Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝ Կ.Մ. Խաչատրյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՎՀՀ 01504054,ՀՀ, ք. Երևան, Տերյան 105
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Վերագնա-հատման պահուստ	Այլ տարրեր	Կուտակված շահույթ	Ընդամենը
2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,096**	**156,482**	**1,149,929**	**1,313,507**
Տարվա շահույթ	-	-	(48,251)	(48,251)
2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,096**	**156,482**	**1,101,678**	**1,265,256**
Տարվա շահույթ	-	-	99,362	99,362
2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,096**	**156,482**	**1,201,040**	**1,364,618**

Ռեկտոր՝ Գ.Պ. Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝ Ա.Մ. Խաչատրյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՎՀՀ 01504054,ՀՀ, ք. Երևան, Տերյան 105
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	31.12.23թ ավարտված տարվա համար	31.12.22թ ավարտված տարվա համար
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**1,086,956**	**1,285,195**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից	4,516,578	4,067,559
Գործառնական այլ գործունեությունից	158,255	212,497
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	**4,674,833**	**4,280,056**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	(78,890)	(76,589)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(291,271)	(302,782)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(3,861,861)	(3,645,932)
Վճարումներ պետական բյուջե	(56,749)	(30,472)
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ		-
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝		-
Կրթաթոշակ և ՀՀ բյուջե ետ վերադարձ	(179,472)	(241,361)
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	**(4,468,243)**	**(4,297,136)**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**206,590**	**(17,080)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		-
Ընդամենը ներդրումային գործունությունից մուտքեր		-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		-
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(284,734)	(258,938)
Ընդամենը ներդրումային գործունությունից ելքեր	**(284,734)**	**(258,938)**
Ֆինանսական գործունեությունից դրամական մուտքեր		
Ֆինանսական գործունեությունից մուտքեր, այդ թվում՝	59,943	77,778
Ստացված տոկոսներ	59,943	77,778
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	**59,943**	**77,778**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(18,201)**	**(198,240)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ**		
Ներքին շարժեր**		
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**1,068,755**	**1,086,956**

Ռեկտոր՝ Գ. Պ. Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝ Է.Մ. Խաչատրյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՎՀՀ 01504054,ՀՀ, ք. Երևան, Տերյան 105
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթություններ

1. <u>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</u>

1.1. Ընդհանուր տեղեկություններ

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 273.210.03288) իրավահաջորդն է (փոխանցման ակտին համապատասխան): Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

Հիմնադրամի գործունեությունը հիմնականում բակալավրի, մագիստրոսի կրթական ծրագրերով բարձրագույն մասնագիտական կրթության և հետազոտողի ծրագրով (ասպիրանտուրա) հետբուհական մասնագիտական կրթության իրականացումն է ինչպես նաև նախադպրոցական, հանրակրթական (ավագ դպրոց), նախնական մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպումը:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Տերյան 105:

Հիմնադրամն ունի մասնաճյուղեր Գյումրի, Վանաձոր և Կապան քաղաքներում:

Հիմնադրամի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

1.2. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

1) հոգաբարձուների խորհուրդը.
2) տնօրենը (այսուհետ՝ ռեկտոր): Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է Հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներից:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը 20 է:

- 5-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ,
- 5-ը՝ ուսանողների ներկայացուցիչներ,
- 5-ը՝ հիմնադիր ներկայացուցիչներ են՝ առաջադրված ՀՀ վարչապետի կողմից պետական պաշտոն զբաղեցնող անձանցից,
- 5-ը՝ լիազոր մարմնի ներկայացուցիչներ են կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտներից:

2. <u>ՖՀՄՍ-ՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ</u>

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

2) Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.

բ) շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար:Հիմնադրամը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը(վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական միջոցներ ի հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից. Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի(նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Հիմնադրամը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր), որի սկզբնական արժեքը հիմնական միջոցի ամբողջ արժեքում էական է, կամ ունի տնտեսական օգուտների սպառման նշանակալիորեն տարբեր մոդել, կամ ունի նշանակալիորեն տարբեր օգտակար ծառայություն, հաշվառվում է որպես առանձին միավոր: Հիմնադրամը հիմնական միջոցի միավորի սկզբնավորման արժեքը բաշխում է ըստ դրա հիմնական բաղադրիչների: Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները առանձնացնելուց հետո հիմնական միջոցի միավորի մնացած մասը ևս հաշվառվում է որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ (հիմնական միջոցի միավորի մնացորդային հիմնական բաղադրիչ): Որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ առանձին հաշվառվում

է նաև հիմնական միջոցի միավորի անսարքությունների առկայության վերաբերյալ կանոնավոր լայնածավալ ստուգումների իրականացման ծախսումները (արժեքը), ինչպես նաև հիմնական միջոցի միավորի կանոնավոր լայնածավալ կապիտալ վերանորոգումների ծախսումները (արժեքը): Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Չափումը ճանաչման պահին

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, պետք է չափվի իր սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է: Երբ վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է, անհապաղ վճարման գնի համարժեքի և ընդհանուր վճարումների տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային ծախս՝ հետաձգված ժամկետի ընթացքում, բացառությամբ եթե նշված տոկոսային ծախսումը կապիտալացվում է: Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.
ա) Հիմնադրամի կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,
բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,
գ) տեխնիկական հնացածությունը,
դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ: Հիմնադրամը հիմնական միջոցների խմբերի նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունները.

ՀՄ անվանում	Օգտակար ծառայության ժամկետ
Շենքեր, կառուցվածքներ	10-20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	1-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Արտադրատնտեսական գույք	8 տարի
Այլ	1-8 տարի

Հողամասը ունի անսահմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար դրա համար մաշվածություն չի հաշվարկվում:

Մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների օգտակար ծառայությունը սահմանվում է 1 տարի:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հետագա ծախսումները Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները: Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Հիմնական միջոցների փոխարինվող մասերը ենթակա են ապաճանաչման: Ամենօրյա սպասարկման ծախսումները) չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապաճանաչվի, երբ՝
ա) այն օտարվում է, կամ
բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

4) Ակտիվների արժեզրկում

Սույն պարագրաֆի դրույթները վերաբերում են հիմնական միջոցներին: Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Հիմնադրամը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Հիմնադրամը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Արժեզրկումից կորուստ

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում: Արժեզրկումից կորստի ճանաչումից հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով: Արժեզրկումից կորստի հակադարձում Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Ակտիվի, բացառությամբ գուդվիլի, գծով արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչելուց հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված

հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

5) Պաշարներ

Սկզբնական չափում

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են Հիմնադրամի ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են: Պաշարների վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները: Այն ներառում է նաև պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են նյութերը պատրաստի արտադրանք դարձնելու (վերամշակելու) ընթացքում: Պաշարների ինքնարժեքի մեջ այլ ծախսումները ներառվում են միայն այն չափով, որ չափով դրանք կատարվել են՝ պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար: Պաշարների ինքնարժեքի մեջ չներառվող և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումների օրինակներ են՝

ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերածախսի հետ.

բ) պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը.

գ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ. դ) վաճառքի ծախսումները: Երբ պաշարները ձեռք են բերվում հետաձգված մարման ժամկետով, ապա վճարման նորմալ պայմաններում ձեռքբերման գնի և վճարված գումարի տարբերությունը, ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսավորման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում: Պաշարների ինքնարժեքում փոխառության ծախսումների՝ կապիտալացման մոտեցումները ներկայացված են համապատասխան բաժնում:

Ինքնարժեքի բանաձևեր

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ (առաջին մուտք առաջին ելք) արժեքով: Հետագա չափում Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման զուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների հաշվեկշռի ամսաթվի դրությամբ: Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար՝ մինչև իրացման զուտ արժեք, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն

ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը: Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման զուտ արժեքի աճից, ճանաչվում են որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը: Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով: Ոչ իրացվելի են այն պաշարները, որոնք չեն իրացվել կամ օգտագործվել հաշվեկշռում հաշվառելուց 12 ամսվա ընթացքում և որոնք հավանական է, որ որևէ այլ ձևով չեն օգտագործվի՝ կապված դրանց բարոյական հնացման, որակի վատացման և այլ պատճառներով:

6) Ֆինանսական ակտիվներ Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչում

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով: Այլ բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը լավագույնս ներկայացվում է գործարքի գնով: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթը կամ վնասը գրանցվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է բացահայտվել միևնույն գործիքում դիտարկելի շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի մուտքային տվյալները ներառում են միայն դիտարկելի շուկայական տվյալները: Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Չափման կատեգորիաներ Հիմնադրամը դասակարգում է ֆինանսական ակտիվները՝ օգտագործելով հետևյալ չափման կատեգորիաները. չափվում են իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով, չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամուտի միջոցով և չափվում են ամորտիզացված արժեքով: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումն ու հետագա չափումը կախված է

(i) ակտիվների պորտֆելի կառավարման համար Հիմնադրամի բիզնես մոդելից, և
(ii) ակտիվի դրամական միջոցների հոսքերի բնութագրերից: Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում.

Բիզնես մոդել

Բիզնես մոդելը այն եղանակն է, որն օգտագործելով Հիմնադրամը կառավարում է ակտիվները՝ դրամական միջոցների հոսքեր ստանալու համար. արդյոք Հիմնադրամի նպատակն է.

(i) ակտիվներից միայն պայմանագրային դրամական հոսքերի ստացումը («ակտիվների պահումը պայմանագրային դրամական հոսքերի ստացման համար») կամ
(ii) պայմանագրային դրամական հոսքերի և ակտիվների վաճառքից առաջացող դրամական հոսքերի ստացումը («ակտիվների պահումը պայմանագրային դրամական հոսքերի և վաճառքի համար»), կամ, եթե կիրառելի չէ ոչ (i) կետը և ոչ էլ (ii) կետը, ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «այլ» բիզնես մոդելների մաս և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:
(iii) Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում, դրամական հոսքերի հատկանիշներ

Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրային դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրային դրամական հոսքերի ստացման և վաճառքի համար, Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք դրամական հոսքերը ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարումները: Ֆինանսական ակտիվների վերադասակարգում Ֆինանսական գործիքները

վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ ամբողջությամբ փոփոխվում է այդ պորտֆելի կառավարման բիզնես մոդելը: Վերադասակարգումը իրականացվում է առաջընթաց՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում – ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ

Ելնելով կանխատեսումներից, Հիմնադրամը հաշվարկում է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները: Հիմնադրամը չափում է ակնկալվող պարտքային կորուստները և ճանաչում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների համար պարտքային կորուստների գնահատված պահուստը: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը արտացոլում է

(i) անաչառ և կշռադատված հավանական գումարը, հաշվի առնելով հնարավոր արդյունքների տիրույթը,

(ii) դրամի արժեքը ժամանակի մեջ և

(iii) բոլոր հիմնավոր և հաստատված տեղեկատվությունը անցյալի իրադարձությունների վերաբերյալ, ներկա պայմանները և ակնկալվող ապագա տնտեսական պայմանները՝ հասանելի հաշվետու ամսաթվին՝ առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստը: Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամուտի միջոցով չափվող պարտքային գործիքների ամորտիզացված արժեքի փոփոխությունները, առանց ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստի, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները արտացոլվում են այլ համապարփակ եկամտում՝ «այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային գործիքներից եկամուտները՝ հանած ծախսերը» հոդվածում: Հիմնադրամը կիրառում է արժեզրկման համար «եռաստիճան» մոդել՝ հիմնվելով սկզբնական ճանաչման պահին պարտքային հասանելիության փոփոխությունների վրա: Ֆինանսական գործիքը, որը սկզբնական ճանաչման պահին չի համարվում արժեզրկված, դասակարգվում է դաս 1-ում: Դաս 1-ի ֆինանսական ակտիվների համար ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են մի գումարով, որն հավասար է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գումարին, որը կարող է առաջանալ դեֆոլտի պատճառով, որն կարող է տեղի ունենալ 12 ամսվա ընթացքում կամ մինչև պայմանագրի համաձայն մարման ժամկետը, եթե այն ավելի կարճ է («12 ամսվա ակնկալվող պարտքային կորուստներ»): Եթե Հիմնադրամը նույնականացնում է պարտքային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչման պահից, ապա ակտիվը փոխանցվում է 2-րդ դաս, և տվյալ ակտիվի գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են ողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա, այսինքն, մինչև պայմանագրի համաձայն մարման ժամկետը, սակայն հաշվի առնելով ստացված կանխավճարները, եթե այն նախատեսված է («ամբողջ ժամկետի համար ակնկալվող պարտքային կորուստներ»): Եթե Հիմնադրամը որոշում է, որ ֆինանսական ակտիվը արժեզրկված է, ապա ակտիվը փոխանցվում է Դաս 3 և ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են որպես ակնկալվող պարտքային կորուստներ ամբողջ ժամկետում: Ֆինանսական ակտիվների դուրսգրում Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ Հիմնադրամը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Հիմնադրամը կարող է դուրս գրել

ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան: Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ.

(ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ

(բ) Հիմնադրամը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ

(i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարգևատրումները կամ

(ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ գեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է վերջված արժեքով. Ցրված վերանայումներ Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով տրված ժամկետային փոխառության գեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (վնասը) ճանաչվում է

- սեփական կապիտալում, եթե ֆինանսական ակտիվը մասնակիցների ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական ակտիվը այլ կողմերի գծով է: Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են և ցպահանջ ավանդները: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Հիմնադրամի դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:

7) Ֆինանսական պարտավորություններ

Ճանաչում

Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ապաճանաչում

Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Ֆինանսական պարտավորությունների չափման խմբեր

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝

(i) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների, և

(ii) ֆինանսական երաշխիքային պայմանագրերի և վարկերի տրամադրման պարտավորությունների: Առևտրական կրեդիտորական պարտքեր Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Ստացված վարկեր և փոխառություններ

Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը: Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

8) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, Հիմնադրամը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝ ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը

կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում): Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում: Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Հիմնադրամը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք: Ընդ որում այդ հաշվարկներում ներառվում է նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասը:

9) Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության տրված (ստացված) ակտիվները ճանաչվում են վարձատուի հաշվեկշռում: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս (ծախսում) գծային հիմունքով, եթե մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում ակտիվի օգտագործումից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը:

10) Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Ճանաչում

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Հիմնադրամն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Չափում

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Հեղչման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի

արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Հեղման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են: Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

11) Հասույթ

Չափում

Հասույթը ճանաչվում է գործարքի գնով: Գործարքի գինը այն հատուցման չափն է, որը խումբը ակնկալում է ստանալ հաճախորդին խոստացված ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ վերահսկողություն փոխանցման դիմաց, բացառությամբ երրորդ անձանց անունից հավաքագրված գումարների: Ապրանքների վաճառք Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Հիմնադրամը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Հիմնադրամը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել: Սովորաբար սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցումը գնորդին համընկնում է սեփականության իրավունքի կամ տիրապետման իրավունքի փոխանցման հետ: Երբ ապրանքները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը: Ծառայությունների մատուցում Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները: Գործարքի ավարտվածության աստիճանը որոշվում է ներքոթվարկյալ մեթոդներից որևէ մեկով (Հիմնադրամը կիրառում է այն մեթոդը, որով հնարավոր է առավել արժանահավատորեն չափել մատուցված ծառայությունները)՝

ա) կատարված աշխատանքների ուսումնասիրություն.

ա) արժույթ՝ -որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են). և -այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են): Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Սկզբնական ճանաչում

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը: Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջինփոխարժեքը:

Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչումը

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

14) Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Հիմնադրամը կիրառում է 20% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և

օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում): Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Հիմնադրամը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը: Եկամուտ կամ ծախս ներկայացում Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

(ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

(բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում: Հիմնադրամը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները: Հաշվանցում Հիմնադրամը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ: Հիմնադրամը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

I. նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

II. տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

15) Սխալներ

Հիմնադրամը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

16) Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է: Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում: Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

17) Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Հիմնադրամը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

ա) պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով, կամ

բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը: Եթե Հիմնադրամը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին: Այնուամենայնիվ, ճշգրտումը կարող է վերագրվել սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչի (օրինակ՝ մեկ այլ ՖՀՄՍ-ի պահանջները բավարարելու նպատակով): Երբ Հիմնադրամի համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Հիմնադրամը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Հիմնադրամը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

18) Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հիմնադրամը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով: Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

19) Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրություններչը վերանայվում են: Անընդհատության սկզբունք . Ղեկավարությունը պատրաստել է սույն ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Ղեկավարության այս դատողությունները հիմնված են Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ընթացիկ պլանների, գործառնությունների շահութաբերության և ֆինանսական ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև Հիմնադրամի ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական վերջին փոփոխությունների ազդեցության վերլուծության հիման վրա:

Փոխկապակցված անձանց հետ գործարքների սկզբնական ճանաչում . Բնականոն գործունեության ընթացքում Հիմնադրամը ունենում է գործարքներ իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9 պահանջում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչում՝ հիմնվելով իրենց իրական արժեքների վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատվում են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ առկա չէ ակտիվ շուկա նման գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նման տեսակի գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում.

Ակնկալվող պարտքային կորուստների չափումը կարևոր գնահատում է, որը իրականացվում է մեթոդարանության, մոդելների և բազային տվյալների օգտագործմամբ: Հետևյալ բաղադրիչները զգալի ազդեցություն ունեն պարտքային կորուստների գնահատված պահուստի վրա՝ դեֆոլտի որոշումը, պարտքային ռիսկի էական աճը, դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ենթարկվածությունը ռիսկին և դեֆոլտի դեպքում կորստի գումարը, ինչպես նաև մակրոտնտեսական սցենարների մոդելները:

Պարտքային ռիսկի էական աճ .

Պարտքային ռիսկի էական աճի միաստման համար Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի ժամկետի ընթացքում դեֆոլտի սկսվելու ռիսկը համեմատում է սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ դեֆոլտի սկսվելու ռիսկի հետ: Գնահատման գործընթացը դիտարկում է պարտքային ռիսկի հարաբերական աճը, այլ ոչ թե հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկի կոնկրետ մակարդակը:

4. ՀԱՍՈՒՅԹ

Հազար դրամ	2023թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պետության կողմից որպես ուսման վարձի փոխհատուցում ստացված հասույթ	1,950,890	1,847,910
Վճարովի ուսուցումից ստացված հասույթ	1,963,462	1,697,621
Գիտական թեմաների և բազային լաբորատորիաների ֆինանսավորումից	359,384	400,563
Ուսանողական սնունդ ստորաբաժանումից	-	-
Այլ վճարովի ծառայություններից	349,498	233,129
ԸՆԴԱՄԵՆԸ	4,623,234	4,179,223

5. ԻՐԱՑՄԱՆ ԻՆՔՆԱՐԺԵՔ

Հազար դրամ	2023թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	2,985,436	2,871,749
Կոմունալ ծախսեր	77,445	88,755
Տարածքների մաքրման և անվտանգության ապահովման ծախսեր	-	-
Շինարարական ծախսեր	4,262	3,305
Գրասենյակային և տնտեսական ծախսեր	8,199	14,307
Սննդի ձեռքբերման ծախսեր	11,663	8,005
Կրթաթոշակ և ուսանողական այլ ծախսեր	18,653	29,059
Տպագրական ծախսեր	18,439	17,628
Գործուղման ծախսեր	-	720
Մաշվածություն	-	-
Այլ ծախսեր	14,338	10,360
ԱԱՀ-ի պակասեցման ծախսեր	43,405	39,276
Ավագ դպրոցի ուսուցիչների սոցիալական վճարներ	3,745	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**3,185,585**	**3,083,164**

6. ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2023թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հեղինակներ	133,076	136,812
Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախս	144,983	94,253
Գովազդի ծախսեր	1,342	634
Սպասարկող անձնակազմի աշխատավարձ	44,927	91,986
Այլ ծախսեր	5,639	5,512
ԸՆԴԱՄԵՆԸ	**329,967**	**329,197**

7. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2023թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	745,939	582,322
Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախս	14,683	9,120
Հիմնական միջոցների նորոգման ծախսեր	218	173
Գործուղման և Ներկայացուցչական ծախսեր	34,991	18,621
Տրանսպորտային և ապահովագրության ծախսեր	28,568	34,388
Շինարարական ծախսեր	5,250	4,620
Խորհրդատվական և փորձագիտական ծախսեր	10,412	3,535
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	67,615	75,297
Բանկային ծառայությունների ծախսեր	2,162	2,065
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	42,415	17,131
Վարչական այլ ծախսեր	48,657	18,895
ԸՆԴԱՄԵՆԸ	**1,000,910**	**767,067**

8. ԱՅԼ ԾԱԽՍ

Հազար դրամ	2023թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	11	58
Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրում	27,972	19,274
Կրթաթոշակ և ուսանողական այլ ծախսեր	3,634	-
Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսեր	77	3,565
Օգնություն	100	50
Արձակուրդային պահուստի հետ վերադարձ	33,255	42,100
Գործառնական այլ ծախսեր	3,770	27,682
ԸՆԴԱՄԵՆԸ	**68,819**	**92,729**

9. ՇՆՈՐՀՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2023թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործուղման և Ներկայացուցչական ծախսեր	19,760	22,071
Բանկային ծառայությունների ծախսեր	-	-
Աշխատավարձ	16,658	107,510
Նյութերի ծախս	30,228	3,253
Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախս	142,905	116,671
Կրթաթոշակ և ուսանողական այլ ծախսեր	1,127	13,638
ԸՆԴԱՄԵՆԸ	**210,678**	**263,143**

10. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ (ԾԱԽՍ) ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	2023թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	39,113	28,816
Հաշվետու ժամանակաշրջանում ճշգրտումից առաջացած հարկ	-	-
Հետաձգված հարկ	1,358	(649)
ԸՆԴԱՄԵՆԸ	**40,471**	**28,167**

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՐԿԱՑՈՒՆԴՐՈՒՅԹԻ ՀԱՄԱՐԻՐՈՒՄ

	2023թ.		2022թ.	
	Հազար դրամ	%	Հազար դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	139,833	100%	(20,084)	100%
Շահութահարկի հաշվարկ				
Կիրառելի հարկային դրույքով	25,170	18%	(3,615)	18%
Չնվազեցվող ծախսերի գծով շահութահարկի ավելացում	15,301	11%	31,782	-158%
Ընդամենը	**40,471**	**29%**	**28,167**	**-140%**

11. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ	Շենքեր և շինություններ	Մեքենաներ, սարքա-վորումներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 01.01.2022թ.	**3,255,420**	**3,285,008**	**791,870**	**7,332,298**
Ավելացում	55,807	122,523	24,186	202,516
Օտարում	-	(29,483)	(8,366)	(37,849)
Շահագործումից հանում	-	(77,376)	(51,082)	(128,458)
Առ 31.12.2022թ.	**3,311,227**	**3,300,672**	**756,608**	**7,368,507**
Ավելացում	77,896	147,310	75,502	300,708
Օտարում	-	-	-	-
Շահագործումից հանում	-	(55,850)	(12,160)	(68,010)
Առ 31.12.2023թ.	**3,389,123**	**3,392,132**	**819,950**	**7,601,205**
Մաշվածություն				
Առ 01.01.2022թ.	**(1,881,324)**	**(3,109,475)**	**(726,776)**	**(5,717,575)**
Ավելացում	(107,011)	(94,916)	(12,045)	(214,105)
Օտարում	-	33,747	4,102	37,849
Շահագործումից հանում	-	76,873	51,083	127,956
Առ 31.12.2022թ.	**(1,988,468)**	**(3,093,770)**	**(683,636)**	**(5,765,874)**
Ավելացում	(112,144)	(165,653)	(17,974)	(295,638)
Օտարում	-	-	-	-
Շահագործումից հանում	-	55,049	12,157	68,006
Առ 31.12.2023թ.	**(2,100,479)**	**(3,203,574)**	**(689,453)**	**(5,993,506)**
Հաշվեկշռային արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,374,096**	**175,533**	**65,094**	**1,614,723**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,322,759**	**206,902**	**72,972**	**1,602,633**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,288,644**	**188,558**	**130,497**	**1,607,699**

12. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար դրամ	Այլ	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**772**	**62,019**	**62,791**
Ավելացում	-	-	-
Օտարում	-	(19,864)	(19,864)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**772**	**42,155**	**42,927**
Ավելացում	-	220	220
Օտարում	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**772**	**42,375**	**43,147**
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**(772)**	**(55,434)**	**(56,206)**
Ավելացում	-	(1,291)	(1,291)
Օտարում	-	19,864	19,864
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(772)**	**(36,861)**	**(37,633)**
Ավելացում	-	(1,973)	(1,973)
Օտարում	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(772)**	**(38,834)**	**(39,606)**
Մնացորդային արժեք			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	-	**6,585**	**6,585**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	**5,294**	**5,294**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	**3,541**	**3,541**

13. ՊԱՇԱՐՆԵՐ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	200,002	175,584
Շինանյութ	4,129	5,483
Ապրանքներ	7,926	8,367
Սնունդ	-	-
Անավարտ արտադրանք	-	-
Ընդամենը	**212,057**	**189,434**

14. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	90,132	67,401
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(26,564)	(25,902)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	63,568	41,499
Տրված կանխավճարներ	91	967
Դեբիտորական պարտքեր բյուջեին	-	
Ստացվելիք տոկոսներ	-	-
Այլ դեբիտորական պարտքեր	-	229
Ընդամենը	**63,659**	**42,695**

15. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	-	-
Բանկային հաշիվներ	787,480	690,607
Դրամական միջոցների համարժեքներ	281,275	396,349
Ընդամենը	**1,068,755**	**1,086,956**

16. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություն գնումների գծով	25,192	26,626
Պարտավորություն աշխատակիցների նկատմամբ	761	1,723
Վճարվելիք կրթաթոշակ	399	2,666
Վճարվելիք հարկեր և դրոշմանիշային վճար	16,824	47,079
Այլ պարտավորություններ	37,245	8,515
Ընդամենը	**80,421**	**86,609**

17. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ	-	*12,166*
Փոխառություններ	-	12,166
Ընթացիկ	12,166	*18,249*
Փոխառություններ	12,166	18,249

18. ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը առ 01 հունվարի	**1,116,968**	**1,165,126**
Ստացված ակտիվներ	77,908	70,142
Անհատույց ստացված շենքեր	-	-
Տեղափոխումից եկամուտներին վերաբերող շնորհներ	18,172	2,740
Անհատույց ստացված շենքերի հանձնում պետությանը	-	-
Ստացված ծառայություններ	18,860	-
Եկամուտ (ծախս) փոխարժեքային տարբերություններից	-	-
Ճանաչված եկամուտ ՀՄ	(171038)	(121,039)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,060,872**	**1,116,969**

19. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը առ 01 հունվարի	**22,441**	**49,156**
Ստացված հատկացումներ	71,195	131,941
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհներից	-	-
Ետ վերադարձ	-	(1,297)
Հատկացում ակտիվներին վերաբերվող շնորհներին	(18,172)	(2,740)
Եկամուտներ փոխարժեքային տարբերություններից		(8,063)
Որպես եկամուտ ճանաչված հատկացումներ (ծնթ.)	(38,009)	(146,556)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**37,455**	**22,441**

20. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Հիմնադրամը ենթարկում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվությունվերը նշված յուրաքանչյուր ռիսկին Հիմնադրամի ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումներ:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Հոգաբարձուների խորհրդին իր գործունեության վերաբերյալ:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Հիմնադրամի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

(բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմնի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Հիմնադրամի նկատմամբ: Հիմնադրամը ցուցաբերում է առանձնահատուկ մոտեցում պայմանագրային յուրաքանչյուր կողմի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում գործընկերներից ստացվելիք դեբիտորական պարտքերի և կապակցված կողմերին տրված վարկերի գծով:

Հիմնադրամը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Վարկային գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանաչափը գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար՝ բացառությամբ կապակցված կողմերի:

(գ) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Վարկային ռիսկին Հիմնադրամի ենթարկվածությունը հիմնականում կրճատված է յուրաքանչյուր գործընկերոջ առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև գործընկերների բազայի կառուցվածքը, ներառյալ տվյալ ոլորտի հաճախորդի ու երկրի կողմից հանձնառնված պարտականության չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ վարկային ռիսկի վրա:

Հիմնադրամը ձևավորում է արժեզրկման գծով պահուստ, որնիրենից ներկայացնում է առևտրական և այլդ եբիտորական պարտքերի գծով կրած վնասների Հիմնադրամի գնահատականը: Այս պահուստը վերաբերում է անհատական հիմունքով ռիսկի զգալի գործոն պարունակող պարտքերին, որոնք արժեզրկված են:

(դ) Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն «Փոխկապակցված կողմերի բացահայտում» ՀՀՄՍ24-ի կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Հիմնադրամի ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ

անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակցված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի ղեկավար անձնակազմի հետ կատարվել է 37,406 հազար դրամի գործարք /վճարվել է աշխատավարձ/ :

(ե) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն՝ բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի համբավը վտանգելու: Հիմնադրամը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

(զ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայականգների, այդ թվում արտարժույթի փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը.

21. Պայմանական դեպքեր

(ա) ՇՐՋԱԿԱՄԻՋԱՎԱՅՐԻՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

Հիմնադրամը բավարարում է ՀՀ կառավարության պահանջները կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

(բ) ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամն ամբողջությամբ վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից:

(գ) ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Հարկային պարտավորությունները Հայաստանում**

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասականեն և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները և կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Հիմնադրամի համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

Ռեկտոր՝ Գ. Պ. Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Ս. Սանասարյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.08.2024 14:27